Doi: 10.56737/2953-7843-2025.02-90

ԱՎԱԳ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՎԱՉԳԵՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱՀԱՅՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ (1958–1989)

Սկիզբը՝ թիվ Բ., Գ.

Թիվ 31

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻՆ
ԳԱՂՏՆԻ

Էջմիածնի մայր աթոռի առաջնորդ ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա դիմել է Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առաջարկելով Էջմիածնի կաթողիկոսարանից նվեր ընդունել 150 հազար դոլար հանրապետության կարիքների համար։

Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհուրդը նպատակահարմար է գտնում ընդունել կաթողիկոսարանից որպես նվեր 150 հազար դոլարը եւ օգտագործել արտասահմանում հանրապետության համար անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերման նպատակով։

Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյան[1]
1979 թվականի հունվարի 15
ՀԱԱ, ֆ. 1, ց. 59, գ. 158, թ. 8։ Մեքենագիր։ Բնագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 32

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N. 126
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԻՍՏԻ
1979 թ. մարտի 6
ՀԱՏՈՒԿ ԹՂԹԱՊԱՆԱԿ

[1] *Ֆ. Սարգսյանը 1980 թ. հուլիսի 31-ին տեղեկացրեց, որ նշյալ գումարը հատկացվելու է Պետհեռուստառադիոյին «կինոտեխնիկական սարքավորումների պարկի թարմացման նպատակով»։ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 21, թ. 101։*

ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ

50. Վազգեն Ի կաթողիկոսի Ֆրանսիա այցի մասին։

Ընդունել ս. թ. մայիսի 3-ից մինչեւ հունիսի 10-ը Ֆրանսիա եւ Շվեյցարիա այցի մասին Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի առաջարկությունը։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 20, թ. 10։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 33

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N. 162
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԻՍՏԻ
1980 թ. փետրվարի 15
ՀԱՏՈՒԿ ԹՂԹԱՊԱՆԱԿ
ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ

24. Վազգեն Ի կաթողիկոսի արտասահման այցի մասին։

Թույլատրել Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդին համաձայնվել Վազգեն Առաջին կաթողիկոսի այցին ԱՄՆ, Արգենտինա, Բրազիլիա եւ Ֆրանսիա ս. թ. մայիս-հուլիսին 65 օր ժամկետով, հայ եկեղեցու թեմերի եւ հայ գաղթօջախների հետ էջմիածնի կապերի հետագա ամրապնդման համար։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 21, թ. 10։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

Թիվ 34

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N. 171
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԻՍՏԻ
1980 թ. մայիսի 27
ՀԱՏՈՒԿ ԹՂԹԱՊԱՆԱԿ
ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ

20. «Նոր կտակարանի» հայերեն լեզվով վերահրատարակման մասին։

Ընդունել ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդին առընթեր Կրոնի գործերի խորհրդի հետ համաձայնեցված Հայ եկեղեցու գործերի խորհրդի առա-

ջարկությունը[2], եւ համաձայնություն տալ էջմիածնի կաթողիկոսարանին «Նոր կտակարանի» (հայերեն) վերահրատարակմանը 20 հազար տպաքանակով, հիմնականում Իրանի հայ համայնքի շրջանում տարածելու համար։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 21, թ. 36։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

ԹԻՎ 35

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԳԱՂՏՆԻ

Վազգեն Առաջին կաթողիկոսը հրավեր է ստացել այցելել հայ եկեղեցու նոր ձեւավորված կենտրոնա-եւրոպական թեմ՝ առաջնորդ Մեսրոպ վարդապետ Գրիգորյանի կողմից։ Թեմի կենտրոնը, որը միավորում է Ավստրիայի, ԳԴՀ[3], Շվեդիայի հայկական եկեղեցիները, գտնվում է Վիեննայում։ Այցի նպատակն է նոր ձեւավորված թեմի դիրքերի ամրապնդումը եւ տեղում թեմի գործունեության վերաբերյալ գործնական հրահանգ տալը։

Կաթողիկոսը միջնորդել է շքախմբով 3 հոգի կազմով մեկնում Ավստրիա, ԳԴՀ ս. թ. հոկտեմբերի 3-ից 17-ը՝ Վիեննա (Ավստրիա), Մյունխեն եւ Ֆրանկֆուրտ (ԳԴՀ) այցով։

Կաթողիկոսը նախատեսում է կազմակերպչական հարցերի լուծման համար միայն գավազանակրի ուղեկցությամբ ոչ պաշտոնական այցով մեկնել Փարիզ եւ Ժնեւ։

Խորհուրդը նպատակահարմար է համարում բավարարել կաթողիկոսի միջնորդությունը՝ նոր ձեւավորված թեմում էջմիածնի ազդեցության ամրապնդման նպատակով, ինչպես նաեւ՝ կազմակերպչական հարցերի լուծման համար[4]։

---

[2] *Ռ. Պարսամյանը 1980 թ. հունվարի 14-ին էր դիմել, հատկապես նշելով նախորդ՝ 1975 թվականի հրատարակության ամբողջ տպաքանակի սպառման եւ իրանահայերի՝ արեւելահայերեն խոսելու ու Ս. էջմիածնին բազմաթիվ դիմումներ հղելու փաստերը։ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 21, թ. 37։*

[3] *Գերմանիայի Դաշնային Հանրապետություն։*

[4] *ՀԿԿ ԿԿ բյուրոն 1980 թ. հուլիսի 7-ին թույլատրեց։ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 21, թ. 40։*

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՊԱՐՍԱՄՅԱՆ[5]

1980 թ. հունիսի 11

ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 21, թ. 41: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ռուս.:

ԹԻՎ 36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻՆ

ԳԱՂՏՆԻ

Ինչպես հայտնի է, ըստ հայ եկեղեցու ավանդույթի, յոթ տարին մեկ անգամ էջմիածնում անցկացվում է մյուռոնօրհնության ծես հայ եկեղեցու բոլոր պատրիարքների եւ եպիսկոպոսների ու հյուրերի մասնակցությամբ:

Վերջին անգամ մյուռոնօրհնություն անցկացվել է 1976 թվականի աշնանը:

Միաժամանակ, սույն թվականի աշնանը լրանում է Վազգեն I կաթողիկոսի ծննդյան 75-ամյակը եւ կաթողիկոսի հոգեւոր դասի ձեռնադրության 40-ամյակը:

Մյուռոնօրհնության ծեսը ծրագրվում է անցկացնել էջմիածնում սեպտեմբերի 25-ին, կիրակի, իսկ Վազգեն I կաթողիկոսի ծննդյան 75-ամյակը եւ հոգեւոր դասի ընդունման 40-ամյակը՝ սեպտեմբերի 27-ին:

Վազգեն I կաթողիկոսը ս. թ. սեպտեմբերի 20-ից մինչեւ 30-ը ծրագրում է էջմիածին հրավիրել Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պիմեն պատրիարքին շքախմբով, Վրացական եկեղեցու պատրիարք-կաթողիկոս Իլյա II-ին շքախմբով, հայ եկեղեցու արտասահմանյան 85 ներկայացուցչի (պաշտամունքի ծառայող, բարեգործ եւ նշանավոր հյուրեր) եւ արտասահմանյան այլ եկեղեցիների մոտ 20 ներկայացուցիչների:

Խորհուրդը նպատակահարմար է համարում բավարարել կաթողիկոսարանի միջնորդությունը՝ մյուռոնօրհնության անցկացում ու Վազգեն I կաթողիկոսի ծննդյան 75-ամյակի եւ ձեռնադրության 40-ամյակի տոնակատարություն ս. թ. սեպտեմբեր ամսին:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՊԱՐՍԱՄՅԱՆ

1983 թ. փետրվարի 2

ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 24, թ. 55: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ռուս.:

---

[5] *Պարսամյան Ռուբեն Հովսեփի (1920–1989) – 1979–1984 թթ. Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ:*

ԹԻՎ 37

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻՆ
ՀՈՒՅԾ ԳԱՂՏՆԻ

Հայ եկեղեցու ավանդույթի համաձայն, էջմիածնում 1983 թ. աշնանը պետք է տեղի ունենա մյուռոնօրհնության ծես հայ եկեղեցու բոլոր պատրիարքների եւ եպիսկոպոսների ու հյուրերի մասնակցությամբ: Միաժամանակ, 1983 թվականի աշնանը լրանում է Վազգեն Առաջին կաթողիկոսի ծննդյան 75 եւ հոգեւոր աստիճան ընդունման 40-ամյակները:

Էջմիածնի կաթողիկոսությունը ծրագրում է մյուռոնօրհնության ծեսն անցկացնել սեպտեմբերի 25-ին, իսկ Վազգեն Առաջին կաթողիկոսի ծննդյան 75 եւ հոգեւոր աստիճանի ընդունման 40-ամյակների տոնակատարությունը՝ 1983 թվականի սեպտեմբերի 27-ին[6]:

Այդ միջոցառումներին մասնակցության համար էջմիածնի կաթողիկոսությունը նախատեսում է հրավիրել 1983 թ. սեպտեմբերի 20-ից մինչեւ 30-ը հայ եկեղեցու եւ հայկական համայնքների 85 արտասահմանյան ներկայացուցիչների, ինչպես նաեւ Մոսկվայի ու Համայն Ռուսիո Պիմեն պատրիարքին իր շքախմբով ու Վրացական եկեղեցու պատրիարք-կաթողիկոս Իլյա Երկրորդին իր շքախմբով:

Արտասահմանյան հայ հասարակական գործիչների եւ հոգեւորականության ներկայացուցիչների էջմիածին ժամանումը կնպաստի Խորհրդային Հայաստանի հետ կապերի ամրապնդմանը, արտասահմանյան հայկական թեմերում էջմիածնի ազդեցության ուժեղացմանը եւ էջմիածնի կաթողիկոսության հեղինակության բարձրացմանը:

Նպատակահարմար ենք համարում իրականացնել հետեւյալ միջոցառումները.

1. Թույլատրել Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդին համաձայնություն տալ 1983 թվականի սեպտեմբերին էջմիածնում մյուռոնօրհնության եւ Վազգեն Առաջին կաթողիկոսի ծննդյան 75-ամյակի տոնակատարության անցկացմանը, միջոցառումներին մասնակցելու համար հայ եկեղեցու եւ հայկական համայնքների 85 արտասահմանյան ներկայացուցիչների, ինչպես նաեւ Ռուսական եւ Վրացական ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչների հրավիրմամբ[7]:

---

[6] *Տե՛ս մանրամասն «Էջմիածին», 1983, թ. 9–10:*

[7] *Տե՛ս մասնակիցների ցանկը «Էջմիածին», 1983, թ. 9–10, էջ 71–73:*

2. Նախատեսել Վազգեն Առաջինի գլխավորությամբ հյուրերի ընդունելություն Մինիստրների խորհրդի նախագահի կողմից[8]: Այդ մասին տեղեկատվությունը մամուլում հրապարակել եւ հեռուստատեսությամբ ու ռադիոյով հաղորդել:

3. Թույլատրել Հայ եկեղեցու գործերի խորհրդին Վազգեն Առաջինի 75-ամյակի պատվին ճաշ կազմակերպել, հրավիրելով կաթողիկոսության 70 հյուրերի, նաեւ նվեր մատուցելով: Ծախսը Մինիստրների խորհրդի պահուստային ֆոնդի հաշվին փոխանցել[9]:

4. Հանձնարարել Մինիստրների խորհրդին առընթեր Արտասահմանյան զբոսաշրջության վարչությանը ապահովել միջոցառման մասնակիցների տեղավորումը եւ պատշաճ սպասարկումը: Հայաստանի Արհմիությունների խորհրդին եւ ԼԿԵՄ կենտկոմին՝ արտասահմանյան զբոսաշրջիկների ընդունելությանը «Ինտուրիստ»-ին աջակցել:

5. Արմենպրեսին՝ միջոցառումների վերաբերյալ մամուլում հրապարակման համար ՀԿԿ կենտկոմի բաժինների հետ համաձայնությամբ տեղեկատվություն պատրաստել:

6. Պետհեռուստառադիոյին՝ միջոցառումների եւ հյուրերի կեցության վերաբերյալ արտասահմանյան սփոման համար ռադիոհաղորդումներ կազմակերպել[10]:

7. «Հայրենիքի ձայն» թերթում հրապարակել նյութեր մշուռնօրհնության անցկացման եւ կաթողիկոսի ծննդյան 75-ամյակի տոնակատարության վերաբերյալ[11]:

---

[8] 1983 թ. սեպտեմբերի 26-ին ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանն ընդունեց Վազգեն Առաջինին՝ ուղեկցությամբ թեմակալ առաջնորդների եւ աշխարհիկ հյուրերի: Տե՛ս «Էջմիածին», 1983, թ. 9–10, էջ 6–9:

[9] 1983 թ. սեպտեմբերի 26-ին Հայ եկեղեցու գործերի խորհուրդը «Հրազդան» հյուրանոցում ճաշկերույթ տվեց Վազգեն Առաջինի պատվին: Ներկա էին բոլոր հոգեւոր եւ աշխարհիկ գործիչները, արտաքին գործերի նախարար Ջ. Կիրակոսյանը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության կապի ընկերության նախագահ Ն. Հակոբյանը, Արտասահմանյան տուրիզմի վարչության պետ Հ. Լիլոյանը, խաղաղության ֆոնդի նախագահ է. Միրզոյանը: Տե՛ս «Էջմիածին», 1983, թ. 9–10, էջ 28–30:

[10] Նկարահանվել է հետեւյալ ֆիլմը. «Սուրբ Էջմիածին: Կաթողիկոս Ամենայն Հայոց», 1983: Հետագայում նկարահանվեցին. 1. «Ամենայն հայոց կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.»: 1988: ԽՍՀՄ Հեռուստառադիոկոմիտեի պատվերով: 2. «Մշուռնօրհնություն»: 1991: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատվերով:

[11] Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոն 1983 թ. մարտի 22-ին «Հատուկ թղթապահակ» որոշմամբ համաձայնեց: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 24, թ. 52:

ՀԿԿ ԿԿ պրոպագանդայի եւ ագիտացիայի բաժնի վարիչ Գ. Հասարթյան

ՀԿԿ ԿԿ տեղեկատվության եւ արտասահմանյան կապերի բաժնի վարիչ Լ. Մանասերյան

1983 թ. մարտի 11

ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 24, թթ. 53–54: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ռուս.:

ԹԻՎ 38

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N. 70

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԻՍՏԻ

1983 թ. մարտի 22

ՀԱՏՈՒԿ ԹՂԹԱՊԱՆԱԿ

ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ

30. Վազգեն Առաջին կաթողիկոսի Անգլիա եւ Ֆրանսիա այցելության մասին:

Ընդունել ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի առաջարկությունը ս. թ. մայիսի 3-ից մինչեւ 27-ը Վազգեն Առաջին կաթողիկոսի Անգլիա եւ Ֆրանսիա այցի մասին[12], ըստ ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդին առընթեր Կրոնի գործերի խորհրդի հաստատած արտասահմանյան եկեղեցական կապերի ծրագրի:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 24, թ. 56: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ռուս.:

ԹԻՎ 39

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ[13]

Ծայրագույն պատրիարք, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ 1983 թ. սեպտեմբերի 19-ի ՀՐԱՄԱՆԱԳՐՈՎ խաղաղության պաշտպանության օգտին հայրենասիրական գոր-

---

[12] Այցը տեղի է ունեցել 1983 թ. մայիսի 6-ից հունիսի 1-ը: Տե՛ս «Էջմիածին», 1983, թ. 5–6, էջ 6–48:

[13] Գլխատառերով տպագրված է պաշտոնաթերթի վրա, մնացյալը ավելացված է ձեռագրով:

ծուներության համար եւ ծննդյան յոթանասունհինգամյակի կապակցությամբ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ Է ՁԵԶ ՊԱՏՎՈԳՐՈՎ։

ՀՍՍՀ Գերագույն Սովետի Նախագահության նախագահ՝ Բ. Սարկիսով[14]

1983 թ. սեպտեմբերի 19[15]

ԹԻՎ 40

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N. 103

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ

1984 թ. փետրվարի 29

ՀԱՏՈՒԿ ԹՂԹԱՊԱՆԱԿ

ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ

13. Վազգեն Առաջին կաթողիկոսի Արգենտինա, Ուրուգվայ, Բրազիլիա եւ Ֆրանսիա այցելության մասին[16]։

Ընդունել ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի առաջարկությունը Արգենտինա, Ուրուգվայ, Բրազիլիա եւ Ֆրանսիա ս. թ. ապրիլին 45 օր ժամկետով Վազգեն Առաջին կաթողիկոսի այցելության մասին, ըստ 1984 թվականի էջմիածնի կաթողիկոսության միջազգային կապերի հաստատված ծրագրի։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 25, թ. 14։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

ԹԻՎ 41

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻՆ

ԳԱՂՏՆԻ

Էջմիածնի կաթողիկոսարանը դիմել է Խորհրդին խնդրելով թույլատրել հրատարակել «Վազգեն Առաջին կաթողիկոսի մասին կենսագրա-

---

[14] Սարկիսով Բաբկեն Եսայու (1913–1999) – 1975–1985 թթ. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ։

[15] 1983 թ. սեպտեմբերի 29-ին պատվոգիրը Գերագույն խորհրդի նստավայրում Վազգեն Առաջինին հանդիսավոր հանձնեց Բ. Սարկիսովը։ Ներկա էին թեմակալ առաջնորդները։ Տե՛ս մանրամասն «Էջմիածին», 1983, թ. 9–10, էջ 3–5։

[16] Տե՛ս «Էջմիածին», 1984, թ. 6, էջ 9–10, թ. 7–9, էջ 3–199։

կան ակնարկներ» չորս հատորով։ Նշյալ ակնարկների առաջին հատորը ընդգրկում է 1908–1955 թթ. կյանքի տարիները։

Հաշվի առնելով կաթողիկոսի օծման 30-ամյակը, վերջինս խնդրում է թույլատրել առաջին հատորի հրատարակությունը մինչեւ ս. թ. սեպտեմբեր ամիսը, 4000 տպաքանակով։

Խորհուրդը պաշտպանում է կաթողիկոսարանի միջնորդությունը[17]։

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Ռ. ՋԱՐԳԱՐՅԱՆ

1985 թ. ապրիլի 18

ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 26, թ. 33։ Բնագիր։ Մեքենագիր։ Թարգմ. ռուս.։

ԹԻՎ 42

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻՆ

ԳԱՂՏՆԻ

Ս. թ. սեպտեմբերի վերջին էջմիածնում նախատեսվում է նշել Վազգեն Առաջին կաթողիկոսի գահակալության 30-ամյակը եւ ծննդյան օրը[18]։

Այդ առթիվ միջոցառումներին մասնակցության համար էջմիածնի կաթողիկոսարանը ծրագրում է հրավիրել արտասահմանյան հայկական բոլոր թեմերի առաջնորդներին, որոշ այլ եկեղեցականների[19], ինչպես նաեւ աշխարհիկ անձանց, ընդհանուր առմամբ՝ շուրջ 35 հոգի։ Ակնկալվում է նաեւ «Ինտուրիստի» գծով որոշակի քանակի հյուրերի ժամանում։

Նշյալ միջոցառման պատշաճ մակարդակով անցկացման, սփյուռքի կյանքում էջմիածնի դերի բարձրացման, Հայրենիքի հետ նրա կապերի

---

[17] ՀԿԿ կենտկոմի բյուրոն 1985 թ. մայիսի 5-ին «Հատուկ թղթապանակ» որոշմամբ թույլատրեց։ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 26, թ. 31։ Դրական կարծիք հայտնեց ԿԿ քարոզչության եւ ագիտացիայի բաժնի վարիչ Գ. Հասրաթյանը։ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 26, թ. 32։ Սակայն, 1985 թ. մայիսի 28-ին Հայ եկեղեցու գործերի խորհուրդն առաջարկել էր չորսի փոխարեն սահմանափակվել երկու հատորով։ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 24, թ. 46։ Արդեն հունիսի 4-ին բյուրոն հավանեց առաջարկը. «կենսագրական ակնարկների հրատարակում կաթողիկոսարանի թղթի եւ ֆինանսական միջոցների հաշվին, հայկական սփյուռքում տարածելու համար»։ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 26, թ. 44։

[18] Տեղի ունեցան 1985 թ. սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 5-ը։ Տե՛ս մանրամասն «Էջմիածին», 1985, թ. 9–10, էջ 5–51։

[19] Տե՛ս ցանկը «Էջմիածին», 1985, թ. 9–10, էջ 39։

ամրապնդման համար Խորհուրդը խնդրում է քննարկել հետեւյալ առաջարկությունները.

1. Կազմակերպել կաթողիկոսի գլխավորությամբ հյուրերի ընդունելություն Մինիստրների Խորհրդի նախագահի կողմից[20]: Ընդունելության մասին մամուլով, հեռուստատեսությամբ եւ ռադիոյով հաղորդագրություն տալ:

2. Կաթողիկոսի գահակալության հոբելյանի առթիվ հյուրերի մասնակցությամբ ճաշ կազմակերպել: Ընդհանուր առմամբ՝ 70 հոգի:

3. Էջմիածնում միջոցառումների մասին արտասահմանյան սփոման համար հաղորդումներ կազմակերպել:

4. «Հայրենիքի ձայն» թերթում միջոցառումների մասին նյութեր նախատեսել:

5. Էջմիածնում կաթողիկոսի գահակալության 30-ամյակի եւ ծննդյան օրվա առթիվ հանդիսավոր նիստում նրան հուշանվեր հանձնել: Հանձնարարել հանրապետության Մինիստրների Խորհրդին նվեր նախապատրաստել:

6. «Արմենիա» հյուրանոցում հյուրերի տեղավորման համար «Ինտուրիստ»-ի հայկական բաժանմունքին 15–20 համար տրամադրել:

7. Հանդիսավոր նիստում Հայ եկեղեցու գործերի խորհրդի, Խաղաղության պաշտպանության կոմիտեի, Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի, Մատենադարանի ողջույնի ելույթներ նախատեսել[21]:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՀԱՍՐԱԹՅԱՆ

1985 թ. հուլիսի 8

ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 26, թ. 56: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ռուս.:

---

[20] Այս ընդունելությունը տեղի ունեցավ 1985 թ. հոկտեմբերի 1-ին: Ներկա էին նաեւ Վրաց Իլյա Բ. կաթողիկոսը եւ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Ջավեն արքեպիսկոպոս Ջինչինյանը:

[21] ՀԿԿ կգ քարոզչության եւ ագիտացիայի բաժնի վարիչ Գ. Հասրաթյանը ու տեղեկատվության եւ արտասահմանյան կապերի բաժնի վարիչի տեղակալ Յ. Պետրոսյանը 1985 թ. հուլիսի 12-ին դրական կարծիք էին տվել. «Էջմիածին ներկայացուցիչների եւ արտասահմանյան հայ հասարակական գործիչների ժամանումը կնպաստի Խորհրդային Հայաստանի հետ կապերի ամրապնդմանը, հայկական թեմերում էջմիածնի ազդեցության ուժեղացմանը, Էջմիածնի կաթողիկոսարանի հեղինակության բարձրացմանը»: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 26, թթ. 53–55: ՀԿԿ կկ բյուրոն 1985 թ. հուլիսի 19-ին «Հատուկ թղթապանակ» որոշմամբ թույլատրեց: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 26, թ. 52:

ԹԻՎ 43

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի

ԳԱՂՏՆԻ

1. Հայրենասիրական, խաղաղարար գործունեության ասպարեզում մեծ վաստակի, Խորհրդային պետության խաղաղասիրական արտաքին քաղաքականության ակտիվ աջակցության եւ ծննդյան 80-ամյակի կապակցությամբ Գերագույն պատրիարք, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին կառավարական պարգեւի ներկայացնել։

2. Հանձնարարել «Հայրենիքի ձայն» թերթի եւ «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրություններին կաթողիկոսի 80-ամյակին նվիրված հոդվածներ հրապարակել։

3. Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության եւ Մինիստրների Խորհրդի անունից հայ եկեղեցու առաջնորդին ողջույնի նամակ հղել։

4. Խնդրել ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդին առընթեր Կրոնի գործերի խորհրդին Վազգեն Առաջին կաթողիկոսի հասցեին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության կամ ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի անունից ողջույնի հղման հարց քննարկել[22]։

5. Թույլատրել ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդին Վազգեն Առաջին կաթողիկոսի պատվին 70 հոգի հյուրի հրավիրմամբ պաշտոնական ընդունելություն կազմակերպել։

6. Հանձնարարել ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդին կաթողիկոսի հոբելյանի կապակցությամբ հուշանվեր ձեռք բերել։

7. ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդին՝ Հայ եկեղեցու գործերի խորհրդի ներկայացմամբ հյուրերի կեցության հետ կապված հարցերը քննարկել։

Հայ եկեղեցու գործերի խորհուրդը նպատակահարմար է գտնում արտասահմանյան թեմերի ներկայացուցիչների հետ հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում Խորհրդային Հայաստանի նվաճումներին, կյանքի խորհրդային կերպի քարոզչությանը, խորհրդային պետության

---

[22] 1985 թ. սեպտեմբերի 19-ին ողջույնի հեռագիր էր հղել ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր Կրոնական գործերի խորհրդի նախագահ Խարչեւը։ Տես «Էջմիածին», 1985, թ. 9–10, էջ 40։

խաղաղասիրական քաղաքականությանը լայնորեն ծանոթացմանն ուղղված անհրաժեշտ աշխատանք անցկացնել։

Վազգեն Առաջին կաթողիկոսի ծննդյան 80-ամյակի միջոցառումները պետք է էջմիածնի միջազգային հեղինակության բարձրացման, «դաշնակցություն» կուսակցության կողմից ուղղորդվող Կիլիկիայի կաթողիկոսության պառակտիչ գործունեության դեմ պայքարում նրա դիրքերի ամրապնդմանը նպաստեն[23]։

ՀԱԱ, ֆ. 1, ց. 73, գ. 48, թ. 56–57: Բնագիր: Մեքենագիր: Թարգմ. ռուս.:

ԹԻՎ 44

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Ամենայն հայոց կաթողիկոս, Ծայրագույն պատրիարք Վազգեն Ա-ին Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգեւատրելու մասին[24]

Խաղաղարար գործունեության համար եւ ծննդյան ութսունամյակի[25] առթիվ Ամենայն հայոց կաթողիկոս, Ծայրագույն պատրիարք Վազգեն Ա-ին պարգեւատրել Աշխատանքային կարմիր դրոշի[26] *շքանշանով[27]։*

ՍՍՀՄ Գերագույն Սովետի նախագահության նախագահ՝ Ա. Գրոմիկո

ՍՍՀՄ Գերագույն Սովետի նախագահության քարտուղար՝ Թ. Մենթեշաշվիլի

Մոսկվա, Կրեմլ, 1988 թ. սեպտեմբերի 19

«ՍՍՀՄ Գերագույն սովետի տեղեկագիր», 1988, սեպտեմբեր 21, թ. 38, էջ 5, 13[28]:

---

[23] *Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանը 1987 թ. հոկտեմբերի 13-ին ՀԿԿ ԿԿ-ին առաջարկեց հավանություն տալ։ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 73, գ. 48, թ. 55։ Կենտկոմի տեղեկատվության եւ արտասահմանյան կապերի ու ընդհանուր բաժինները նոյեմբերի 10-ին հաստատեցին թուլտվությունը։ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 73, գ. 48, թթ. 52–53։*

[24] *1989 թ. մարտի 31-ին հանդիսավոր պայմաններում Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հ. Ոսկանյանը շքանշանը հանձնեց Վազգեն Առաջինին։ Տե՛ս «Էջմիածին», 1989, թ. 2–3, էջ 11։*

[25] *Տե՛ս մանրամասն «Էջմիածին», 1988, թ. 9–10, էջ 4–34։*

[26] *Ընդգծումը բնագրինն է։*

[27] *Վազգեն Առաջինին շնորհավորեցին ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Խարչեւը, Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հ. Ոսկանյանը, Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանը, Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Վարդանյանը, արտաքին գործերի մինիստր Ա. Մկրտչյանը։ Տե՛ս «Էջմիածին», 1988, թ. 9–10, էջեր 10, 16–23։*

[28] *1988 թ. հունիսի 3-ին Մոսկվայի եւ համայն Ռուսիո պատրիարք Պիմենի գլխավորությամբ 15 ռուս հոգեւորական պարգեւատրվեց՝ Պիմենը եւ 4 հոգի Աշխատանքային կարմիր*

ԹԻՎ 45

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԸՆԿ. Գ. Ա. ԳԱԼՈՅԱՆԻՆ

Այս տարվա սկզբին լինելով [Ամերիկայի] Միացյալ Նահանգներում Վազգեն Ա կաթողիկոսը հանդիպել է Սաուդյան Արաբիայի ազդեցիկ գործիչներից մեկի հետ, ով պատրաստակամություն է հայտնել էապես մասնակցել Հայաստանին օգնության կազմակերպմանը: Խոսակցություն է գնացել երկու հազար տնակի հատկացման մասին: Նշյալ գործիչը ցանկություն է հայտնել կաթողիկոսին Սաուդյան Արաբիա հրավիրել՝ այդ երկրի թագավորի հետ հանդիպման համար:

Օրերս ԱՄՆ գործուղումից վերադարձած կաթողիկոսարանի դիվանապետ Պոզապալյան արքեպիսկոպոսը հաղորդեց, որ սաուդյան կողմը սպասում է Սաուդյան Արաբիա պաշտոնական հրավերի համար Վազգեն Ա-ի պատասխանին: Ներկայացուցիչը, ում հետ բանակցություններ են վարվել, հասկացնել է տվել, որ իր երկիրը շահագրգռված է կաթողիկոսի այցով մեր երկրների միջեւ հարաբերությունների բարելավմամբ, քանի որ ԽՍՀՄ-ը Սաուդյան Արաբիայում դիվանագիտական ներկայացուցչություն չունի:

Կաթողիկոսը համաձայն է եւ խնդրում է քննարկել իրագործման հնարավորությունը[29]:

Հայ եկեղեցու գործերի խորհուրդը աջակցում է Վազգեն Ա առաջարկությունը:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

1989 թ. հունիսի 12

դրոշի, 10 թեմակալ առաջնորդ՝ ժողովուրդների բարեկամության շքանշաններով «Ակտիվ խաղաղարար գործունեության համար եւ Ռուսիայի մկրտության 1000-ամյակի կապակցությամբ»: Տես «ՍՍՀՄ Գերագույն սովետի տեղեկագիր», 1988, հունիս 8, թ. 23, էջ 11, 27: 1988 թ. նոյեմբերի 16-ին ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգեւատրվեց Անդրկովկասի մուսուլմանների հոգեւոր վարչության նախագահ Ալլահշուքյուր Փաշա-զադեն: Տես «ՍՍՀՄ Գերագույն սովետի տեղեկագիր», 1988, նոյեմբեր 16, թ. 46, էջ 2, 6: 1983 թ. դեկտեմբերի 23-ին Վրաց Ուղղափառ եկեղեցու առաջնորդ, կաթողիկոս-պատրիարք Իլյա Բ. ժողովուրդների բարեկամության շքանշանով ծննդյան հիսունամյակի առթիվ: Տես «ՍՍՀՄ Գերագույն սովետի տեղեկագիր», 1983, դեկտեմբեր 28, թ. 52, էջ 19:

[29] Այցի իրականացման վերաբերյալ որեւէ հիշատակում չհայտնաբերվեց: ԽՍՀՄ-ի եւ Սաուդյան Արաբիայի միջեւ դիվանագիտական հարաբերությունները վերականգնվել են 1991 թ.:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 703, թ. 73: Մեքենագիր: Բնագիր: Թարգմ. ռուս.[30]:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Արխիվ, պահոց, դիւան, փաստաթուղթ, վաւերագիր:

РЕЗЮМЕ

Католикос всех армян Вазген Первый возглавил Армянскую Апостольскую Церковь в судьбоносный и исторически значимый период, как для армянского народа, так и для самой Церкви. Настоящая публикация включает ряд документов, отражающих ключевые аспекты его деятельности, в частности:

– издательские и полиграфические вопросы (разрешения на издание Евангелия, проповедей, альбомов о Св. Эчмиадзине, публикации отчетов о зарубежных визитах),

– официальные разрешения на проведение юбилеев (дня рождения, интронизации), благословения мира и созыв архиерейских соборов,

– визиты Вазгена Первого за рубеж и прием иностранных делегаций в Св. Эчмиадзине,

– решения руководящих органов (ЦК КП Армении, Верховного Совета СССР и Армянской ССР) о его награждении.

Все документы снабжены необходимыми комментариями, позволяющими современному читателю глубже понять политику коммунистического режима в отношении Церкви.

Публикуемые материалы – ранее неизвестные и впервые вводятся в научный оборот. Большинство из них переведены с русского языка. Это архивные документы ЦК КП Армении, Совета Министров Армянской ССР и Совета по делам Армянской церкви. Часть из них имеет гриф «Особая папка», присваиваемый особо важным и секретным решениям.

---

[30] *ԽՍՀՄ ԱԳՆ եւս նպատակահարմար է համարել հրավերի ընդունումը եւ այցը: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 703, թ. 74:*

SUMMARY

Catholicos of All Armenians Vasken I assumed the leadership of the Armenian Apostolic Church during a critical and historically significant period for both the Armenian nation and the Church. This publication presents a series of archival documents that shed light on the key aspects of his activities, including:

– Publishing and printing matters (approvals for the publication of the Gospel, Vasken I's sermons, albums on Holy Etchmiadzin, and reports on his foreign visits),

– Permissions to celebrate jubilees (birth and enthronement anniversaries), perform the blessing of the Holy Chrism (Myron), and convene episcopal assemblies,

– Authorizations for Vasken I's official visits abroad and the reception of foreign delegations in Holy Etchmiadzin,

– Decisions by the Central Committee of the Communist Party of Armenia, the Supreme Soviet of the USSR, and the Armenian SSR concerning his awards and honors.

All documents are accompanied by explanatory notes, allowing the modern reader to better understand the Soviet government's policy toward the Church.

The published materials are being introduced into scientific circulation for the first time. Most of them have been translated from Russian. These are archival documents of the Central Committee of the Communist Party of Armenia, the Council of Ministers of the Armenian SSR, and the Council for Religious Affairs. Some of them are marked "Special Folder," a designation given to particularly important and secret decisions.